

պահուած թիւն . երեք յատկութիւնք՝ որ անհրա-
 ժեշտ կարեւոր են այսպիսի պաշտօններու համար:
 Այս իւր երեք յատկութեանցը շնորհիւ՝ Յով-
 հաննէս Չէլէպին մեծապէս սիրելի եղաւ բոլոր
 արքունական տան . ի մասնաւորի թագաւորն հայ-
 րագութ խնամածութեամբ մը կը հոգար զինքը
 եւ անոր մեծ որդին զԳրիգոր, որ հազիւ երի-
 տասարդութեան արբունքն հասած՝ թեւ ու թի-
 կունք էր հօրը: Սուլթանն իւր մեծ հաճութիւնն
 կը յայտնէր մանաւանդ երբ Յովհաննու եղբայրն՝
 որ քաջ քնարահար էր, եւ Յովհաննու որդիքը՝
 Սերգիս եւ Միքայէլ՝ ճարտար փանդոնահարք,
 իրենց մատանց արագ շարժմամբը զարքայն կը
 զուրթացընէին:

Յովհաննու ճարտարութիւնն այնպէս ա-
 նուանի էր, որ նոյն իսկ Սուլթան Սէլիմ՝ որ քաջ
 արուեստագէտ էր, մանաւանդ գրականտիկոնի
 մէջ, շատ անգամ իւր զարմանքն յայտնած է
 Յովհաննու ձեռագիտութիւնը տեսնելով:

Այս ճարտարութեան հետ Յովհաննէս
 ուրիշ յատկութիւն մ'ունէր, որ էր խղճի մտօք
 փոյթ տանիլ իւր զաւակաց բարւոք դաստիա-
 րակութեան, եւ ինքն անոնց առջիւ գիտութեան
 լուսաւոր փարոս մըն էր: Ճշմարիտ գիտութեան
 փափագող ցուցուց զինքն՝ երբ բազմակողմանի
 ուսմանց եւ երաժշտութեան մէջ ինքն արդէն
 կրթուած՝ փոյթ տարաւ նաեւ իւր ազգայնոց
 յառաջադիմութեան: Ի պալատաւ եւ ի գարթալ
 երկու դպրոց հաստատեց՝ գրեթէ միայն իւր ան-
 ձնական դրամոց նպաստիւքը: Մեծ փոյթ տա-